ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ Հեռ. 091407836
Էլ. հասցե. sh.doydoyan@icloud.com
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարար
Հակոբ Արշակյանին

03.09.2020
346-18

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Արշակյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ե՞րբ են մեկնարկել թոքերի արհեստական շնչառության սարքերի ստեղծման գաղափարների մասնագիտական ուսումնասիրության, նախագծման և մակետային նախատիպի մշակման աշխատանքները: Խնդրում ենք նաեւ նշել աշխատանքների կատարման ավարտի ժամկետը:

2. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվելիք 45 մլն դրամի ո՞ր մասն է արդեն հատկացվել «Ինժեներական ասոցիացիա» ՀԿ-ին:

3. Նախատեսվող աշխատանքներն ի՞նչ չափով են կատարվել, այժմ ծրագիրը կատարման ո՞ր փուլում է և ե՞րբ է նախատեսվում ամփոփել աշխատանքները:

4. Ո՞րն է թոքերի արհեստական շնչառության սարքերի ստեղծման գաղափարների մասնագիտական ուսումնասիրության, նախագծման և մակետային նախատիպի մշակման ծրագրից ակնկալվող **գլխավոր արդյունքը**:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան